ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՀՌՉԱԿՄԱՆ 2023-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ»

2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի աշխարհաքաղաքական փոփոխությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումների համատեքստում մշակույթը և ստեղծարար ոլորտները դարձել են ազդեցիկ գործոններ սոցիալական և տնտեսական զարգացման, նորարարությունների, միջմշակութային երկխոսության խթանման գործում:

«Հայաստանի Հանրապետության մշակույթի պահպանության, զարգացման և հանրահռչակման 2023-2027 թվականների ռազմավարությունը» (այսուհետ՝ Ռազմավարություն) սահմանում է մշակույթը՝ որպես ազգային ինքնության կայացման և համընդհանուր արժեքային հենքով միջազգային համակեցության պայման, ազգային անվտանգության ապահովման գրավական, հայապահպանության երաշխավորը սփյուռքում, արժեքահենք քաղաքացու կրթության և դաստիարակության գրավական, հանրային համերաշխության և բարեկեցիկ հասարակության ձևավորման երաշխիք, միջազգային համագործակցության ընդլայնման գործոն:

Ռազմավարության հիմքում ընկած է ազգային ինքնության և արժեքների հենքի վրա ստեղծված մշակույթի պահպանումը, զարգացումը, տարածումն ու հանրահռչակումը, ազգային և համամարդկային արժեքների հետ զուգորդումը և հաղորդակցումը, համընդհանուր ներառականության ապահովումը, մշակույթի և արվեստի հասանելիությունը, ստեղծարարության, փորձարարական ու նորարարական ձևերի խրախուսումը, մշակույթի տնտեսականացումը, կառավարման ժամանակակից համակարգերի ներդրումն ու կարողությունների զարգացումը, մշակույթի մեկենասության ինստիտուտի ներդրումը, պետություն-մասնավոր համագործակցության փոխշահավետ մեխանիզմների խթանումը, ժողովրդավարական արժեքների գերակայության ամրապնդումը, աշխարհի մշակութային քարտեզում հայկական մշակույթի դիրքավորումը:

Ռազմավարությունն ուղենշում է մինչև 2027 թվականը մշակույթի ոլորտի զարգացման 4 հիմնական ուղղություններ, որոնք ամբողջացնում են ոլորտի զարգացման միտումները մշակութային ժառանգության և ստեղծարար ոլորտների զարգացման համատեքստում: Այդ ուղղություններն են՝

- մշակութային ժառանգության պահպանությունը և փոխանցումը սերունդներին,
- մշակութային և ստեղծարար ոլորտների արդիականացումը,
- նորարարությունը, մշակութային հասանելիությունը և ներառականությունը,
- միջազգային համագործակցությունը:

Ռազմավարության 2024 թվականի առաջընթացի սույն հաշվետվությունը ներկայացված է նշված ռազմավարական չորս ուղղությունների շրջանակում իրականացված միջոցառումների տրամաբանությամբ՝ դրանք խմբավորելով ըստ ոլորտային նպատակների:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻՆ

Ռազմավարությունը զարգացման գերակա ուղղություն է սահմանել մշակութային ժառանգության պահպանության և անխաթար փոխանցման ապահովումը, որն իրականացվում է 4 հիմնական ոլորտների շրջանակում:

Պատմության և մշակույթի հուշարձանների ոլորտ[1]

Պատմության և մշակույթի հուշարձաններ հանդիսացող քաղաքացիական, պետականության խորհրդանիշ հանդիսացող ճարտարապետական հուշարձանների (այդ թվում՝ ամրոցների և բերդերի) ամրակայման, նորոգման, վերականգնման և ենթակառուցվածքների ստեղծման նպատակով իրականացվել են 15 հուշարձանների վերականգնման աշխատանքներ՝ կրկնակի ավելի նախորդ տարվա համեմատ (3-ը՝ ավարտված, 12-ը՝ շարունակական), մշակվել կամ մշակման փուլում են ևս 9 հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման գիտանախագծային փաստաթղթերը: Այս նպատակներով պետական բյուջեից ծախսվել են նախորդ տարվա համեմատ կրկնակի ավելի միջոցներ՝ շուրջ 884 մլն ՀՀ դրամ:



Գծապետկեր 1. Հուշարձանների վերականգնմանը ՀՀ պետական բյուջեի հատկացումների դինամիկան 2022-2024 թվականներին

Ավարտվել են պետականության խորհրդանիշ հանդիսացող հուշարձանների՝ Բերդկունքի ամրոցի, Հորսի Չեսար Օրբելյանի պալատի, Օրբելյանների (Սելիմի) քարավանատան վերականգնման գիտանախագծային փաստաթղթերի կազմման

---

[1] *Ոլորտի պետական քաղաքականության նպատակն է կատարելագործել բնագավառի իրավական դաշտը, կանոնակարգել կառավարման գործընթացում ներգրավված ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների գործառույթները և լիազորությունները, կատարելագործել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումների լիարժեք և ամբողջական վերահսկողության գործընթացները, վերանգված և վնասված հուշարձանների վերականգնման, բարեկարգման աշխատանքները, կազմակերպել մշակութային զբոսաշրջության զարգացման նպատակով պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի օգտագործումը, ստեղծել պայմաններ ժամանակակից պահանջներով հնագիտական ժառանգության հետազոտությունների և հեռանկարային զարգացման համար, նպաստել միջազգային գիտական համագործակցության ընդլայնմանը:*

աշխատանքները, ընթացքի մեջ են Աղձքի հայոց արքաների դամբարանի, Տափի բերդի, Բաղաբերդի, Սմբատաբերդի վերականգնման գիտանախագծային փաստաթղթերի կազմման աշխատանքները:

Շարունակել են հատուկ ուշադրության կենտրոնում մնալ որմնանկարների վերականգնման աշխատանքները. վերականգնվել են Վայոց ձորի մարզի Գնդեվազի Սուրբ Աստվածածին եկեղեցու որմնանկարները:

Ազգային փոքրամասնությունների հուշարձանների վերականգնման միջոցառումների ներքո մեկնարկել է Լոռու մարզի Ամրակիցի Սուրբ Նիկոլայ Հրաշագործ եկեղեցու վերականգնումը:

Հուշարձանների վերականգնման համատեքստում մի շարք նախագծերում ներառվել է քայլուղիների բարեկարգում՝ հուշարձանները զբոսաշրջիկներին առավել հասանելի դարձնելու համար (Ամբերդ ամրոց, Լոռի բերդ, Երերույք և այլն): Լոռի բերդում սկսվել է նաև տեղեկատվական մոդուլային կենտրոնի կառուցումը:

Ընթացել են Արտաշատ մայրաքաղաքի համալիր վերականգնման և զբոսաշրջային ակտիվ այցելավայրի վերածման աշխատանքները:

Մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ իրականացվել են ևս 6 հուշարձանների վերականգնման աշխատանքներ:

Պետության սեփականություն չհանդիսացող հուշարձանների պատշաճ պահպանության նպատակով կնքվել են ավելի քան 240 պահպանագրեր սեփականատերերի հետ:

Կառավարության որոշումներով ստեղծվել են «Երերույք», «Հին Խնձորեսկ», «Բերդկունք ամրոց», «Նորատուսի խաչքարեր» և «Տափի բերդ» պատմամշակութային արգելոցները:

Ոլորտի կառավարման, նոր ենթակառուցվածքների ներդրման շրջանակում հաստատվել է Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տարածքներում տեղադրվող տեղեկատվական ցուցանակների ձևը, վահանակներ են տեղադրվել 250 հուշարձանների տարածքում:

2023 թվականին մեկնարկած «Տեղեկատվական մոդուլային կենտրոնների ստեղծման» շրջանակում հաշվետու տարում «Լոռի բերդ քաղաքատեղի» պատմամշակութային արգելոցի տարածքում սկսվել են կենտրոնի տեղադրման աշխատանքները (ավարտը՝ 2025 թվականին):

Թանգարանների ոլորտ[2]

Հաշվետու տարում ընդունվել է «Թանգարանների մասին» ՀՀ օրենքը՝ որպես անկախ Հայաստանի Հանրապետության պատմության մեջ թանգարանների ոլորտը կարգավորող առաջին մայր օրենք (այսուհետ՝ Օրենք):

Օրենքը կարգավորում է թանգարանների գործունեության հետ կապված հարաբերությունները, սահմանում թանգարանների տեսակները, գործառույթները, Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի ձևավորման, համալրման, հաշվառման, պահպանության, օգտագործման, անվտանգության սկզբունքները, Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի կազմում ընդգրկված թանգարանային առարկաների և հավաքածուների ժամանակավոր պահպանության հանձնելու և արտահանման գործընթացները:

Արվեստի ստեղծագործությունների վաճառքի մեխանիզմների և գործիքակազմի զարգացման, շուկայի ձևավորման, արվեստագետի վարկանիշի բարձրացման, ինչպես նաև հայ և օտարազգի արվեստագետների, գալերիստների, քննադատների միջև նոր ինստիտուցիոնալ կապերի ձևավորման, միջազգային շուկաներում հայկական մշակույթի և ստեղծարար ոլորտների ինտեգրման ու Հայաստանի ճանաչելիության բարձրացման նպատակով՝ մշակվել է «Մշակութային աճուրդների կազմակերպման մասին» օրենքի նախագիծը, որը ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել և ներկայացվել ՀՀ Ազգային ժողով:

Թանգարանների կառավարման արդյունավետության բարձրացման, նոր ենթակառուցվածների ներդրման և ընդլայնման գործողությունների շրջանակում 2024 թվականին գործարկվել է Թանգարանների էլեկտրոնային տոմսային միասնական համակարգը, ինչպես նաև՝ համակարգի բջջային հավելվածը և եռալեզու կայքը՝ museumsarmenia.am: Համակարգի միջոցով հասանելի է դարձել թանգարաններում վաճառված տոմսերի մասին մանրամասն տեղեկատվությունը, ինչը թափանցիկ և տեսանելի է դարձնում ոլորտի գործունեությունը: Համակարգը նաև նոր պայմաններ է ստեղծում տարբեր թանգարանների միասնական տոմսերի, զբոսաշրջային փաթեթների հետ համադրման, թանգարանային հուշանվերների առցանց վաճառքի և այլ ուղղություններով: Համակարգին միացել է 26 թանգարան: 2025 թվականին նախատեսվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ գործող բոլոր թանգարանների ներառումը համակարգ:

Թանգարանների վարչատնտեսական գործունեության միասնական կառավարման և մարքեթինգային միասնական քաղաքականության իրականացման նպատակով ձևավորվել է Մշակույթի զարգացման հիմնադրամը: Իրականացված նախապատ-րաստական աշխատանքների արդյունքում 2025 թվականից արդեն իսկ կմեկնարկի

---

[2] *Ոլորտի պետական քաղաքականության նպատակն է թանգարանային հավաքածուների պահպանությունը և շարունակական հանրայնացումը, թանգարանի՝ որպես սոցիալ-կրթական ինստիտուտի կայացումը, հասարակության բոլոր սոցիալական շերտերի և տարիքային խմբերի, հատկապես՝ երեխաների և պատանիների ոչ ֆորմալ կրթության ապահովումը: Որպես գերակայություն է սահմանվել թանգարանների կառավարման արդյունավետության բարձրացում, թանգարանային տարածքների արդիականացում և ազգային ֆոնդի առավելագույն հանրահռչակումը:*

թանգարանների գնումների, հաշվապահության և այլ վարչատնտեսական գործառույթների իրականացումը հիմնադրամի կողմից՝ կենտրոնացված կարգով:

Այցելությունները 2022-2024 թվականներին գրանցել են կայուն աճ, հաշվետու տարում կազմելով՝ 1.24 մլն այցելու, որից 50%-ը՝ զբոսաշրջիկներ:



Գծապատկեր 2. ՀՀ թանգարանների այցելուների թվի դինամիկան 2022-2024 թվականներին

Թանգարանների սեփական եկամուտները գրեթե կրկնապատկվել են 2022 թվականի նկատմամբ՝ կազմելով շուրջ 1,4 մլրդ ՀՀ դրամ:

Շարունակվել է պետական միջոցներով հավաքածուների համալրման գործընթացը: 2023 թվականից վերականգնված թանգարանային հավաքածուների համալրման ծրագրով 3 թանգարաններ («Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ը, «Ե. Չարենցի տուն-թանգարան» ՊՈԱԿ-ը և Հ. Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան» ՊՈԱԿ-ը) հնարավորություն են ստացել ձեռք բերել 8 նոր մշակութային արժեքներ:

Կարողությունների զարգացման ուղղությամբ շարունակվել են միջազգային համագործակցության ծրագրերը, որոնց շրջանակում 2022-2024 թվականներին վերապատրաստվել է ոլորտի շուրջ 400 մասնագետ:

Գորգի թանգարան-ինստիտուտի ստեղծումը սահմանվել է ռազմավարական առաջնահերթություն, որի ուղղությամբ սկսվել են աշխատանքներ հայեցակարգի մշակման ուղղությամբ: Ծրագիրը ներառվել է ՀՀ 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրում:

Թանգարանների՝ որպես ոչ ֆորմալ կրթական տարածքների կայացումը առաջնահերթություն է սահմանվել ինչպես ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործողությունների ծրագրով, այնպես էլ՝ Ռազմավարությամբ: Վերջին տարիներին թանգարանները զգալիորեն ընդլայնել են կրթական գործունեությունը՝ առաջարկելով բազմաբովանդակ ծրագրեր տարիքային, սոցիալական խմբերի համար: Հաշվետու տարում կրթական գործունեության շրջանակում թանգարանները հյուրընկալել են 38 820 այցելու, ինչը մոտ 29%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը՝ իրականացնելով 1800 կրթամշակութային ծրագիր:

Թանգարանային հավաքածուների միջազգայնացման, միջթանգարանային համագործակցության ընդլայնման շրջանակում կազմակերպվել է 9 միջազգային

ցուցադրություն Հայաստանում և արտերկրում: Առաջին անգամ Հայաստանում ցուցադրվել են Բրիտանական թանգարանում ցուցադրվող Անահիտ Աստվածուհու արձանի մասունքները՝ գլուխը և ձեռքը: «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ում բացվել է «Մայր Աստվածություն. Անահիտից Մարիամ» միջազգային ցուցահանդեսը: Ցուցադրությունը հաշվետու տարվա վերջին երեք ամսվա ընթացքում ունեցել է ավելի քան 16 800 այցելու:

Ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտ[3]

Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության և հանրահռչակման կազմակերպման շրջանակում իրականացվել է 16 ծրագիր, ներառյալ 6 միջազգային նախագծերը: Երևանում և ՀՀ մարզերի 50 համայնքներում ապահովվել է 3 000 շահառուի մասնակցություն: Միջազգային ծրագրերի մասնակցությունը կազմում է շուրջ 60 000:

Ոլորտի գույքագրման գործընթացի շրջանակում ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը համալրվել է 17 տարրով. ցանկերում ընդհանուր ներառված է 108 արժեք:

Համալրվել է նաև ոչ նյութական մշակութային ժառանգության շտեմարանը, որում ներառվել են Հայաստանի համայնքներում կիրառվող ևս 150 ուտեստ (ներկայում ուտեստի շտեմարանը բաղկացած է 400 ուտեստից՝ նախորդ տարվա 250-ի համեմատ):

Գրադարանների ոլորտ[4]

Փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքում: Սահմանվել է «էլեկտրոնային գրադարան» հասկացությունը և տնտեսական գործունեության շրջանակը:

Շարունակվել են գրադարանների էլեկտրոնային համահավաք գրացուցակի համալրման աշխատանքները: Գրավոր ժառանգության թվայնացման գործընթացի շրջանակում թվայնացվել է 831 367 էջ, ընդհանուր 3 323 անուն գիրք, որոնք հասանելի են դարձել «Հայ գիրք» ու «Հայ պարբերական մամուլ» շտեմարաններում:

Գրադարանային ծառայությունների մատուցման արդիականացման ուղղությամբ գրադարաններում ներդրվում է էլեկտրոնային սպասարկման ծրագիրը, որի շրջանակում Խնկո Ապոր անվան ազգային մանկական և Շիրակի մարզային գրադարաններում արդեն

---

[3] *Ոլորտի պետական քաղաքականությունը ուղղված է ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությանը, փոխանցմանն ու հանրայնացմանը, հանրության իրազեկվածությանը, ժառանգության պահպանման գործընթացներում ներգրավմանը, ժառանգության ճանաչելիության բարձրացմանը, տեղի ու դերի արժևորմանը՝ երկրի կայուն զարգացման նպատակների իրագործման համատեքստում:*

[4] *Ոլորտի պետական քաղաքականության նպատակն է գրադարանային հավաքածուների պահպանությունը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ մշակութային ժառանգության թվայնացումը, տեղեկատվական շտեմարանների և միացյալ ավտոմատացված համակարգերի շարունակական զարգացումը, համալրման անընդհատության ու գրադարանային հավաքածուների օգտագործման մատչելիության ապահովումը, հանրությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը, գրադարանների հավասարաչափ բաշխվածության և զարգացվածության ապահովումը, գրադարանների շուրջ համայնքային մշակութային կյանքի կազմակերպման հայեցակարգերի մշակումը:*

իսկ սկսվել են էլեկտրոնային սպասարկման աշխատանքները, ծրագրի ներդրումը նախատեսվում է նաև մյուս մարզային գրադարաններում:

Մարզային մշակութային համաչափ զարգացման, համայնքային գրադարանների դերի վերարժևորման և ընդլայնման ուղղությամբ մշակվել է համայնքներում մշակութային, կրթական, տեղեկատվական և ժամանցային կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) հայեցակարգի նախագիծը, որի հիման վրա ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտարարել է կենտրոնների նախագծանախահաշվային և դիզայներական փաստաթղթերի կազմման գնման մրցույթը: Ընթացքում են 5 համայնքային կենտրոնների մշակույթի տների հիմնանորոգման/վերակառուցման ծառայությունների ձեռքբերման աշխատանքները:

Ոլորտի մասնագիտական ներուժի հզորացման, կարողությունների զարգացման նպատակով Գրադարանային ասոցիացիաների միջազգային ֆեդերացիայի /IFLA/ հետ համագործակցությամբ վերջինիս կողմից մշակվել է Գրադարանների զարգացման ուղեցույցը: Միևնույն ժամանակ միջազգային համագործակցության շրջանակում վերապատրաստվել է շուրջ 60 մասնագետ:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ, ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մշակութային և ստեղծարար ոլորտներում կառավարման մոդելների արդիականացման, ինչպես նաև ոլորտի համակարգային բարեփոխումների առաջ մղման ***նպատակով*** օրենսդրական փոփոխություններ են կատարվել «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքում, որոնց միջոցով ինստիտուցիոնալ ձևակերպումներ են տրվել ինքնազբաղ արվեստագետներին, սահմանվել են ստեղծագործական գործունեության տնտեսական արդյունավետության նոր հիմքեր և պայմաններ, ներդրվել են ոլորտի նոր գործիքներ: Մշակվել է և սահմանված կարգով համաձայնեցումներ է անցնում «Մասնավոր թատրոնների աջակցության» ծրագրի նախագիծը: Ընդունվել են նաև ՀՀ կառավարության 8 որոշում, որոնք վերաբերում են կինեմատոգրաֆիայի ոլորտին և ինքնազբաղ արվեստագետներին:

Ոլորտի արդյունավետության բարձրացման նպատակով շարունակվել է թատերահամերգային կազմակերպությունների ֆինանսավորման նոր մոդելի ներդրումը, որին, բացի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնից, միացել է նաև Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնը: 2025 թվականին նոր մոդելին կմիանա նաև Երևանի պետական կամերային թատրոնը: Նոր մոդելը հնարավորություն է տվել ծավալել ավելի ինտենսիվ մշակութային գործունեություն. մասնավորապես, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում կայացել է 250 ներկայացում և 5 առաջնախաղ՝ 150 000 հանդիսատեսի ընդգրկմամբ, ապահովելով տարեկան եկամուտների մինչև 20%-ով աճ և աշխա-տավարձերի 37%-ով բարձրացում: Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում անցկացվել է 745 ներկայացում և 7 առաջնախաղ՝ 115 000 հանդիսատեսի

ընդգրկմամբ՝ ապահովելով տարեկան եկամուտների մինչև 35%-ով աճ և աշխատավարձերի մինչև 50%-ով բարձրացում:





Գծապատկեր 3 և 4. Ֆինանսավորման նոր մոդելի շրջանակում թատերահամերգային կազմակերպությունների ներկայացումների և հանդիսատեսի թվերի դինամիկան 2023-2024 թվականներին

Ֆինանսավորման նոր մոդելի հեռանկարը թատերահամերգային մյուս կազմակերպություններին էլ է մղել ավելի ակտիվ աշխատանքի: Սեփական եկամուտների աճ են գրանցել գրեթե բոլոր կազմակերպությունները, այդ թվում՝ մարզային թատրոնները՝ մինչև 30%-ով:



Գծապատկեր 5. Ֆինանսավորման նոր մոդելի շրջանակում թատերահամերգային կազմակերպությունների տարեկան եկամուտների և ելույթավճարների/հավելավճարների աճի մասնաբաժինները 2024 թվականին

2024 թվականից թատերահամերգային կազմակերպություններում գործում է ելույթավճարների և լրավճարների սկզբունքը: 2025 թվականից կգործի տնօրենների խրախուսման սկզբունքը. պարգևավճար՝ ձևավորած սեփական եկամուտների 5%-ի չափով և լրացուցիչ 3%՝ տարեկան ցուցանիշները կատարելու և գերակատարելու համար:

Կինոյի ոլորտում ընթացել է ակտիվ օրենսդրական աշխատանք՝ ոլորտը կարգավորելու և համակարգային փոփոխություններ իրականացնելու նպատակով: Ստեղծվել և սկսել է նոր տրամաբանությամբ գործել Հայաստանի կինոյի հիմնադրամը: Մշակվել է կինոյի ոլորտում ներդրումների մասնակի վերադարձի կարգավորման փաթեթը, որը կգործարկվի 2025 թվականից:

Արվեստագետների ու ստեղծարար ոլորտի զարգացումը խթանելու նպատակով Հայկական բարեգործական ընդհանուր միության հետ համատեղ կազմակերպվել է «ԱՍԱ» մրցանակաբաշխությունը, ներդրվել է միջազգային հեղինակավոր փառատոներին մասնակցելու և մրցանակների արժանանալու դեպքում պետության կողմից դրամական խրախուսման՝ պարգևավճարի սահմանման մեխանիզմը: Հաշվետու տարում դրամական խրախուսման ծրագրի շահառու են դարձել 4 անհատ արվեստագետ և 4 կազմակերպություն: Ընդհանուր գումարը կազմել է շուրջ 52,6 մլն ՀՀ դրամ:

Մշակութային և ստեղծարար ոլորտներում ինքնազբաղ ստեղծագործողների գործունեության խթանելու նպատակով իրականացվել է 32 դրամաշնորհային ծրագիր, աջակցություն է ցուցաբերվել 31 գրողի, գրաքննադատի, գեղարվեստական գրականության թարգմանչի: Կայացել է հեղինակային երգի 1-ին մրցույթ-փառատոնը, կազմակերպվել է 161 համերգ՝ 137 անհատ կատարողի մասնակցությամբ, ապահովվել է 24 անհատ կատարողի մասնակցություն միջազգային մրցույթների, փառատոների և բիեննալեների:

Ստեղծագործական ինքնարտահայտման համար բարենպաստ միջավայրի ձևավորման նպատակով մեկնարկել է մարզերում 5 մշակութաժամանցային կենտրոնների ստեղծման գործընթացը, իրականացվել է արվեստի կացարանների 3 ծրագիր:

Կազմակերպվել է Գրքի երևանյան միջազգային փառատոնը, որին մասնակցել են 50 հրատարակչություն, գրավաճառներ և մշակութային կազմակերպություններ: Փառատոնն ունեցել է շուրջ 30 000 այցելու՝ կրկնակի ավելի նախորդ տարվանից, վաճառվել է շուրջ 12 000 գիրք՝ 20%-ով ավելի, քան նախորդ տարի: Կազմակերպվել է 27 միջոցառում՝ 6 երկրներից 250 գրողների, քննադատների և թարգմանիչների մասնակցությամբ, որը 5 անգամ ավելի է, քան նախորդ տարում: Աջակցություն է տրամադրվել 10 լեզվով 20 գրքի թարգմանությանը նախորդ տարվա 9 լեզվով 17 գրքի փոխարեն:

Պետություն-մասնավոր համագործակցության ընդլայնման, մշակութային ներդրումների և բարեգործության խթանման, մշակույթի մեկենասության վարկանիշի ձևավորման համատեքստում կազմակերպվել են տեղեկատվական արշավներ, ԱՍԱ մրցանակաբաշխությունը՝ հովանավորների վարկանիշը հանրության շրջանում բարձրացնելու նպատակով:

Կնքվել է 3 հուշագիր, որից 1-ը միջազգային կազմակերպության հետ՝ հուշարձանների պահպանման և վերականգնման վերաբերյալ, Գաֆեսճյան արվեստի կենտրոնի հետ՝ Վենետիկի արվեստի բիեննալեի հայկական պաշտոնական տաղավարի վերաբերյալ, Ֆաստեքս կազմակերպության հետ՝ Վենետիկի բիեննալեի երկու տաղավարների կազմակերպման, ինչպես նաև՝ այլ մշակութային նախագծերին աջակցելու վերաբերյալ:

Իրականացվել է 3 ծրագիր, այդ թվում՝ Վենետիկի արվեստի բիեննալեի հայկական պաշտոնական տաղավարի նախապատրաստումը, երաժշտական գործիքների ձեռքբերումը, Ֆաբլաբերի ստեղծումը:

Համերգասրահների և թատրոնների ենթակառուցվածքների բարելավման, տեխնիկական վերազինման, ինչպես նաև՝ հաշմանդամության խնդիրներ ունեցող անձանց համար հարմարավետություն և հասանելիություն ապահովելու նպատակով 2024 թվականին վերանորոգվել է 3 թատրոն և 1 համերգասրահ (Հովի. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոն, Սոս Սարգսյանի անվան «Համազգային» թատրոն, Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն, Արամ Խաչատրյան համերգասրահ), 3 կազմակերպության համար ձեռք է բերվել 19 երաժշտական գործիք (Հայաստանի պետական ֆիլիարմոնիա, Կամերային երաժշտության ազգային կենտրոն, Հայաստանի էստրադային ջազ նվագախումբ)՝ ընդհանուր 400 մլն դրամ արժողությամբ: 2023 թվականին շինարարական աշխատանքներ են տարվել 2 թատրոնում, նախագծանախահաշվային աշխատանքներ՝ 4 թատրոնում, գույք է ձեռք բերվել 2 կազմակերպության համար:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարությամբ ամրագրված առաջնային նպատակներից է հասարակության ստեղծարար ընդգրկվածության ապահովումը մշակութային կյանքին, մշակույթի և արվեստների դերի ընդլայնումը երկրի կայուն զարգացման գործընթացներում:

Ազգային ավանդույթների, փոների, ժողովրդական և հայրենասիրական երաժշտության բնակչության կենցաղ ներմուծման նպատակով հաշվետու տարում իրականացվել է 9 երաժշտական (73 600 մասնակից) և 3 թատերական փառատոն (19 000 մասնակից), ինչպես նաև՝ տարբեր նախագծեր ու միջոցառումներ, այդ թվում՝ «Զենքը՝ մշակույթ» նախագիծը, Ժողովրդական երաժշտության և պարի ազգային կենտրոնի կոլեկտիվների ելույթները մարզերում, գիրք նվիրելու միջոցառումները, 42 հոբելյանական միջոցառում, որից 18-ը՝ պետական ֆինանսավորմամբ, 22-ը՝ պետական աջակցությամբ (այդ թվում՝ Տիգրան Մանսուրյանի, Ռոբերտ Ամիրխանյանի, Երվանդ Քոչարի, Պարույր Սևակի, Կոմիտասի քառյակի հոբելյանները):

Մշակույթի ապակենտրոնացման համատեքստում ոլորտային փառատոնային հարթակների որոշարկման արդյունքում մի շարք մարզերում հիմնվել են փառատոներ, մասնավորապես, Ջերմուկի «Ջերմ Ամանոր Ջերմուկում» փառատոնը, Արուճի հոգևոր փառատոնը, Կապանի երաժշտական փառատոնը, Գավառի թատերական երկամսյակը, Գյումրու թատերական փառատոնը, Սայաթ-Նովա փառատոնը Հաղպատում և այլն:

Խթանվել է միջհամայնքային համագործակցությունը. իրականացվել են 4 թատերահամերգային համատեղ նախագծեր, որոնց թվում՝ Ռոբերտ Ամիրխանյանին նվիրված համերգային ծրագիրը Հայաստանի պետական Կամերային երգչախմբի և Վանաձորի Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի սաների մասնակցությամբ,

Երևանի և մարզային թատրոնների միջև համագործակցությունը՝ համատեղ թատերական նախագծեր իրականացնելու և նոր ներկայացումներ բեմադրելու ուղղությամբ:

Մարզերի մշակութային կյանքի ակտիվացմանը մեծապես նպաստել է նաև պետական դրամաշնորհային ծրագիրը, որը հնարավորություն է ընձեռել ոչ միայն ծրագրեր իրականացնել մարզերում, այլ առաջին հերթին աջակցություն ցուցաբերել համայնքային մշակութային կազմակերպություններին՝ ապահովելով համայնքային ներգրավվածություն:

Մշակութային և կրթական քաղաքականությունների ներդաշնակեցման համատեքստում 2024-2025 ուսումնական տարին հայտարարվել է մշակութային կրթության տարի. բոլոր մարզերում կազմակերպվել են մշակութային էքսպոներ, որոնց շրջանակներում դպրոցները իրազեկվել են մշակութային հաստատությունների գործունեության վերաբերյալ: Էքսպոներին մասնակցել է 10 մարզի 65 մշակութային կազմակերպություն (թանգարաններ, թատրոններ, համերգային կազմակերպություններ), որոնք միացած են դպրոցական բաժանորդային համակարգին: Էքսպոներն ունեցել են ընդհանուր շուրջ 27 000 այցելու:

Մշակութային կրթության տարվա շրջանակներում էապես ավելացել են «Դպրոցական բաժանորդային համակարգ» ծրագրի շրջանակում այցելությունները թանգարաններ և թատրոններ՝ կազմելով շուրջ 300 000 աշակերտ, ինչը 30,5%-ով գերազանցում է նախորդ տարվա նույն ցուցանիշը և ընդգրկում է հանրակրթական դպրոցներում սովորողների շուրջ 70%-ը:

Իրականացվել է 21 մանկապատանեկան կրթամշակութային ծրագիր[5] (նախորդ տարվա 18-ի համեմատ), որոնցում ընդգրկվել է շուրջ 31 250 մասնակից՝ 49%-ով ավելի, քան նախորդ տարում:

Ներառականության ապահովման շրջանակներում իրականացվել է 10 թիրախային ծրագիր՝ 1 800 շահառուների մասնակցությամբ (շուրջ 30%-ով ավելի նախորդ տարվա համեմատ):

Առաջին անգամ կազմակերպվել է հեղինակային երգի մրցույթ-փառատոն դպրոցահասակ երեխաների և երիտասարդների շրջանում՝ համապատասխան դրամական պարգևներով (9 հաղթող մասնակիցները և 6 մանկավարժները ստացել են 362 500-ական ՀՀ դրամ, 5 ուսումնական հաստատությունները՝ 1,5-ական մլն ՀՀ դրամ), սահմանված է նաև 5 հատուկ մրցանակ՝ 250 000-ական ՀՀ դրամի չափով:

Շարունակվել է արվեստի, գեղարվեստի և երաժշտական դպրոցի մանկավարժական աշխատողների ատեստավորման գործընթացը: 2024 թվականի ատեստավորմանը մասնակցել է նախորդ տարվա 2 ուղղության փոխարեն 8 ուղղության 465 մանկավարժ կամ նրանց 15.8%-ը, որից նվազագույն շեմը հաղթահարել և ատեստավորված է համարվել 206-ը կամ շուրջ 7%-ը:

---

[5] *«Դասարան+Դասական», «Դաս Ա», «Մեկնարկ», «Զարդագիր», «Քույր դպրոցներ», «Քո արվեստը դպրոցում» և այլն:*

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

29 տարվա ընդմիջումից հետո ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության նախնական ցանկում Հայաստանից նոր հուշարձան է ընդգրկվել՝ «Տիրինկատարի վիշապաքարերը և մշակութային լանդշաֆտը»:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Թեհրանի կենտրոնի հետ վերապատրաստման դասընթաց թանգարանային ոլորտի մասնագետների համար:

Պատրաստվել է 2 հայտ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկում գրանցելու նպատակով:

Հատկապես մեծ հանդիսավորությամբ Հայաստանում և արտերկրում նշվել են Շառլ Ազնավուրի և Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյակները (հոբելյաններն ընդգրկվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի հոչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների 2024-2025 թթ. օրացույցում):

Հայաստանում և արտերկրում մեծ հանդիսավորությամբ նշվել է Երվանդ Քոչարի ծննդյան 125-ամյակը:

Կազմակերպվել են «Եվրոպական ժառանգության օրեր» ավելի քան 210 միջոցառումներով, «Եվրոպական հնագիտության օրեր» շուրջ 10 միջոցառումներով, «Եվրոպական ժառանգության երիտասարդ կերտողներ» մրցույթ, որի շրջանակում Հայաստանի թիմը, որպես հաղթող, ուղևորվել է Ստրասբուրգ:

Մասնակցություն է ապահովվել «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրին (հաստատվել է 5 համագործակցային հայտ) և «Կատապուլտ» ենթածրագրին, շարունակել է գործել «Ստեղծագործ Եվրոպա» հայաստանյան գրասենյակը:

Սևծովյան տնտեսական համագործակցության շրջանակում Հայաստանի նախագահությամբ հաստատվել է Մշակույթի խմբի 2025 թվականի ծրագիրը: Անցկացվել է Արհեստների միջազգային 3-րդ փառատոնը ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքում 5 անդամ-պետությունների մասնակցությամբ:

Մշակութային դիվանագիտություն. Հայաստանի ճանաչելիության բարձրացում

«Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ը իր հավաքածուով մասնակցել է Իտալիայի Հանրապետությունում՝ Վենետիկի Դոժերի պալատում, «Մարկո Պոլո» խորագրով ցուցադրությանը:

Ֆրանսիայի Հանրապետությունում Միսաք Մանուշյանին նվիրված պետական միջոցառումների շրջանակում «Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան» ՊՈԱԿ-ը կազմակերպել է Միսաք Մանուշյանին նվիրված ցուցադրություն:

Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում «Ռուսական արվեստի թանգարան (պրոֆ. Ա. Աբրահամյանի հավաքածու)» ՊՈԱԿ-ը կազմակերպել է «Մոսկվա-Երևան-Մոսկվա. Ռուսական արվեստի թանգարանը (պրոֆ. Ա. Աբրահամյանի հավաքածու) թանգարանը Երևանում» խորագրով ցուցահանդես:

Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության՝ Հայաստանի նախագահության շրջանակում ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքում կազմակերպվել է արհեստների միջազգային 3-րդ փառատոնը, որին մասնակցել են 5 անդամ պետություններ: Փառատոնն ունեցել է 1000-ից ավելի այցելուներ:

Հայաստանի ճանաչելիությունը արտերկրում բարձրացնելու նպատակով կազմակերպվել են «Հայաստանի մշակույթի օրեր» Ղազախստանում և Թուրքմենստանում:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ գործող թատերահամերգային կազմակերպությունները հյուրախաղերով հանդես են եկել 15 երկրի 70 քաղաքում:

Մասնակցություն է ապահովվել միջազգային հեղինակավոր փառատոների (Սանկրիզա փառատոն, Ավինյոնի փառատոն, Պրեմիո մեցենատե փառատոն, Մոն-Լորյե փառատոն, Չեխովի փառատոն), մրցույթների (Դելփյան խաղեր, Արաբեսկ, Մալթայի երաժշտական մրցույթ, Համբուրգի երաժշտական մրցույթ, Բելգիայի բալետի միջազգային միցույթ):

16 ֆիլմ մասնակցել է 149 կինոփառատոնի և արժանացել 90 մրցանակի, դրանց թվում՝ «Ամերիկացին» ֆիլմը, որն ընդգրկվել է Օսկարի «Կարճ ցուցակում», և Զառա Ջյանի «Ես վրեժխնդիր կլինեմ սիրով» ֆիլմը ընդգրկվել է Վենետիկի 81-րդ միջազգային կինոփառատոնի «Վենետիկի կլասիկներ» բաժնի մրցութային ծրագրում և Մար Դել Պլատայի միջազգային կինոփառատոնում Սերգեյ Փարաջանովի 100-ամյակին նվիրված հատուկ ցուցադրությունների ծրագրում:

Նոյեմբերի 27-ին Փարիզի հեղինակավոր Պոմպիդու կենտրոնում կազմակերպվել է հոբելյանական միջոցառում՝ նվիրված երկու մեծանուն մտավորականներ Երվանդ Քոչարին և Սերգեյ Փարաջանովին:

Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյակի շրջանակում կազմակերպվել է 21 միջոցառում, այդ թվում՝ 3 նոր պարային ժամանակակից ներկայացումներ, որոնցից երկուսը՝ հայ-ֆրանսիական, 3 նոր խաղարկային և վավերագրական ֆիլմեր, որոնցից մեկն ընդգրկվել է Վենետիկի հանրահռչակ Լա Մոստրա փառատոնի մրցութային ցանկում: Ստեղծվել են նաև իմերսիվ ցուցահանդես-դեֆիլե՝ Միլանում և Երևանում, կրթամշակութային մարզային ծրագրեր, միջազգային գիտական կոնֆերանսներ, գիրք-ալբոմներ, երաժշտական պերֆորմանսներ, աուդիովիզուալ արտադրանքներ, հեռուստահաղորդաշար, «Փարաջանով» բույր հուշանվերներ: Փարաջանովի ֆիլմերը ցուցադրությամբ հանրահռչակվել են Ֆրանսիայում, Արգենտինայում, Սերբիայում, Չինաստանում:

Շառլ Ազնավուրի հոբելյանական ծրագրերի շրջանակներում կազմակերպվել է 16 միջոցառում, այդ թվում՝ Ջազ նվագախմբի Ազնավուրյան համերգային ծրագիրը 8 երկրում (Արգենտինա, Բրազիլիա, Ուրուգվայ, Բելգիա, Լյուքսեմբուրգ, Լատվիա, Եթովպիա)՝ 10 համերգով, Հայաստանի պետական կամերային նվագախմբի համերգները 5 երկրում (Մեծ Բրիտանիա, Շվեյցարիա, Գերմանիա, Ֆրանսիա)՝ 8 համերգով, ցուցահանդեսներ, գովազդային հոլովակներ: Ստեղծվել են նոր երգի տեսահոլովակ հայ և ֆրանսիացի արտիստների մասնակցությամբ, ինչպես նաև՝ ժողովրդական նվագարաններով, ջազային, սիմֆոնիկ և այլ ժանրերում նոր համերգային ժամանակակից ծրագրեր:

Մասնակցություն է ապահովվել Վենետիկի արվեստի 60-րդ միջազգային բիեննալեին, որին ներկայացել է 1 պաշտոնական և 1 ոչ պաշտոնական տաղավարներով: Պաշտոնական տաղավարում ներկայացվել է Գաֆեսճյան արվեստի կենտրոնի “Արձագանք” խորագրով մուլտիմեդիա նախագիծը (արվեստագետ՝ Նինա Խեմճյան), իսկ ոչ պաշտոնական տաղավարում ներկայացվել է “Akneye” նախագիծը: Ընդհանուր առմամբ Հայաստանի տաղավար այցելել է ավելի քան 15 000 մարդ:

Հայաստանը առանձին տաղավարով և մշակութային ծրագրով մասնակցել է Ֆրանկոֆոնիայի գագաթաժողովին (հայկական ժառանգության ներկայացում VR ձևաչափով, Ազնավուրին նվիրված ֆոտոցուցահանդես և համերգային ծրագիր, 1200 այցելու):

Հայաստանը ավանդաբար մասնակցել է Ֆրանկֆուրտի գրքի միջազգային տոնավաճառին, որին ներկայացված են եղել 7 հրատարակչություն և գրքի գործակալ, կազմակերպվել է 5 միջոցառում: Մասնակցության արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել 23 նոր թարգմանական նախագիծ իրականացնելու վերաբերյալ: